Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-115-12.10.2012-ՏՏ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 113-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 113. Քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու կանոնները խախտելը

1. Քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկից մինչև տասնապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները, որոնց հետևանքով վնաս է պատճառվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գույքին, ինչպես նաև ֆիզիկական անձանց առողջությանը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև հիսնապատիկի չափով:»:

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 152.2-րդ հոդվածով.

«Հոդված 152.2. Շենքերը և շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելը

1. Շենքերը և շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

2. Համայնքի ղեկավարի կամ նրա որոշմամբ սահմանված պատասխանատու պաշտոնատար անձի (անձանց) կողմից շենքերը և շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 156-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 156. Ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման կանոնները խախտելը« ինչպես նաև Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի սահմանված պարտադիր բարեկարգումը չիրականացնելը

1. Ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

2. Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի սահմանված պարտադիր բարեկարգումը չիրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 157-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 157. Ընդհանուր օգտագործման տարածքներում կանաչ գոտիների պահպանության ուղղությամբ միջոցներ չձեռնարկելը, բնակավայրերի ընդհանուր օգտագործման տարածքներում կանաչ գոտիները ոչնչացնելը կամ վնասելը, ինչպես նաև Երևան քաղաքում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնները խախտելը

1. Պաշտոնատար անձանց կողմից իրենց տնօրինության տակ գտնվող կանաչ գոտիների պահպանության ուղղությամբ միջոցներ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Բնակավայրերի ընդհանուր օգտագործման տարածքներում կանաչ գոտիները ոչնչացնելը կամ վնասելը, ինչպես նաև Երևան քաղաքում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 6. Օրենսգրքը լրացնել 157.15-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 157.15. Երևան քաղաքի վարչական սահմաններում կառուցապատողների կողմից շրջակա միջավայրի վրա շինարարական աշխատանքների ազդեցության նվազեցման, շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում փողոցների երթևկության և հետիոտնի անցումների անվտանգության ապահովման, կառուցապատվող օբյեկտներում շինարարական հրապարակների տարանջատման ու սանիտարական վիճակի ապահովման պայմանները չպահպանելը.

1. Կառուցապատողի կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման պայմանների խախտմաբ շինարարական աշխատանքներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

2. Կառուցապատողի կողմից աշխտանքների իրականացման ընթացքում փողոցների երթևկության և հետիոտնի անցումների անվտանգության ապահովման պայմանները չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

3. Կառուցապատվող օբյեկտներում շինարարական հրապարակների տարանջատման ու սանիտարական վիճակի ապահովման պայմանները չպահպանելը.

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Հոդված 7. Օրենսգրքի 158-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասում «ցուցադրելը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սգո ծիսակատարություններին վերաբերող ապրանքներ վաճառող օբյեկտների ցուցափեղկերն ու մուտքերը վարագուրապատված կամ մգավորված ապակիներով չլինելը՝» բառերով.

2) 17-րդ մասում «տուգանքի նշանակում» բառերից հետո հանել «առևտրի իրականացման վայրի կազմակերպչի նկատմամբ» բառերը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 29-րդ, 30-րդ, 31-րդ և 32-րդ մասեր.

«Առևտրի օբյեկտներում և առևտրի իրականացման վայրում վաճառողի (մատակարարի) կողմից մատակարարման պայմանագրով ապրանքների առուվաճառք (մեծածախ առևտուր) կատարելու դեպքում այդ մասին ցուցանակի վրա համապատասխան տեղեկատվություն զետեղված չլինելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

Բացօթյա առևտուր իրականացնող վաճառողի կողմից վաճառքի թույլատրված ապրանքների համար օրենսդրությանը համապատասխան՝ պահման և վաճառքի պայմաններն ապահովող սարքավորումներով չապահովելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասհնգապատիկից մինչև երեսնապատիկի չափով:

Կշռափաթեթավորված և վաճառքի դրված սննդամթերքի փաթեթի կամ մեջդիր պիտակների վրա օրենքով սահմանված նշումների բացակայությունը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

Կենցաղային ծառայության օբյեկտներում մատուցվող ծառայությունների գնացուցակը չփակցնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:»:

Հոդված 8. Օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասից «113 հոդվածով,» բառերը, իսկ 2-րդ մասից «, 113» թիվը հանել:

Հոդված 9. Օրենսգրքի 219.1-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «հողերի մասով» բառերից հետո լրացնել «113-րդ,» բառը, «3-րդ մասերով» բառերից հետո՝ «152.2-րդ հոդվածի 1-ին մասով, 156-րդ, 157-րդ հոդվածի 2-րդ մասով, 157.15-րդ» բառերը:

2) 4–րդ մասում «համայնքի ղեկավարները» բառերից հետո լրացնել «, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետը կամ նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձինք:»:

Հոդված 10. Օրենսգրքի 224-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «53,» թվից հետո լրացնել «95,» թվով, «160,» թվից հետո՝ «169.23, 172.2,» թվերով, իսկ «181,» թվից հետո՝ «182.3,» թվով.

2) 2-րդ մասի 1-ին կետը «53,» թվից հետո լրացնել «95,» թվով, «160,» թվից հետո՝ «169.23, 172.2,» թվերով, իսկ «181,» թվից հետո՝ «182.3,» թվով:

Հոդված 11. Օրենսգրքի 242-րդ և 244.11-րդ հոդվածների՝

1)242-րդ հոդվածում «157-րդ»թվից հետո լրացնել «առաջին մասը» բառերը.

2) 244.11-րդ հոդվածի 1-ին մասում «157-157.14-րդ» բառերը փոխարինել «152.2-րդ հոդվածի 2-րդ մասով, 157.1-157.14-րդ» բառերով.

3) 244.11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «157-157.14-րդ» բառերը փոխարինել «157.1-157.14-րդ» բառերով, «չափով,» բառից հետո լրացնել «152.2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով,».

4) 244.11-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «157-157.14-րդ» բառերը փոխարինել «157.1-157.14-րդ» բառերով:

Հոդված 12. Օրենսգրքի 254-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետը «180.1» թվից առաջ լրացնել «172.3,» թվով:

Հոդված 13. Օրենսգրքի 305-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Համայնքի ղեկավարների կողմից նշանակված տուգանքը մուտքագրվում է համապատասխան համայնքի բյուջե, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց կողմից թույլ տված իրավախախտումների համար նշանակված տուգանքը մուտքագրվում է պետական բյուջե:»:

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արփինե Հովհաննիսյան	1.Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետում «օրենքով սահմանված կարգով նշանակված պատասխանատու պաշտոնատար անձի» բառերը փոխարինել «նրա որոշմամբ սահմանված պատասխանատու պաշտոնատար անձի (անձանց)» բառերով:	1.Ընդունվել է:	1.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետում «օրենքով սահմանված կարգով նշանակված պատասխանատու պաշտոնատար անձի» բառերը փոխարինվել են «նրա որոշմամբ սահմանված պատասխանատու պաշտոնատար անձի (անձանց)» բառերով:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Կորյուն Նահապետյան	1.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետի սանկցիայից հանել «հիսնապատիկից մինչև» բառերը:	1.Ընդունվել է:	1.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետի սանկցիայից հանվել են «հիսնապատիկից մինչև» բառերը:

	2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդվածի վերնագրից հանել «վնասելը կամ դրանց» բառերը, իսկ «գոտիները» բառը փոխարինել «գոտիների» բառով, 1-ին կետից հանել «Ընդհանուր օգտագործման տարածքներում կանաչ գոտիները վնասելը, ինչպես նաև» բառերը:	2. Ընդունվել է:	2.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդվածի վերնագրից հանվել է «վնասելը կամ դրանց» բառերը, իսկ «գոտիները» բառը փոխարինվել է «գոտիների» բառով, 1-ին կետից հանվել է «Ընդհանուր օգտագործման տարածքներում կանաչ գոտիները վնասելը, ինչպես նաև» բառերը:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Հովհաննիսյան	1.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ կետից հանել «Ուսումնական հաստատություններում մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող առևտրի և հանրային սննդի օբյեկտներում ալկոհոլային խմիչքների վաճառք իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհնգապատիկից մինչև երեսնապատիկի չափով:» բառերը:	1.Ընդունվել է:	1.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ կետից հանվել են «Ուսումնական հաստատություններում մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող առևտրի և հանրային սննդի օբյեկտներում ալկոհոլային խմիչքների վաճառք իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհնգապատիկից մինչև երեսնապատիկի չափով:» բառերը և ըստ այդմ՝ 3-րդ կետում «29-րդ, 30-րդ 31-րդ, 32-րդ և 33-րդ մասեր» բառերը փոխարինվել են «29-րդ, 30-րդ 31-րդ և 32-րդ մասեր» բառերով:

	2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ կետում «Երևանի քաղաքապետը կամ նրա կողմից լիազորված պաշտոնատար անձը, ինչպես նաև Երևանի հասարակական կարգի պահպանության համայնքային ծառայության ղեկավարը» բառերը փոխարինել «Երևանի քաղաքապետը կամ նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձինք» բառերով:	2.Ընդունվել է	2.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ կետում «Երևանի քաղաքապետը կամ նրա կողմից լիազորված պաշտոնատար անձը, ինչպես նաև Երևանի հասարակական կարգի պահպանության համայնքային ծառայության ղեկավարը» բառերը փոխարինվել են «Երևանի քաղաքապետը կամ նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձինք» բառերով:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ալեքսան Արզումանյան	1. Ուժը կորցրած ճանաչել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 1-ից 7-րդ հոդվածները:	1.Ընդունվել է:	1. Ուժը կորցրած են ճանաչվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 1-ից 7-րդ հոդվածները:
ՀՀ կառավարություն	1.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 9. Օրենսգրքի 242-րդ և 244.11-րդ հոդվածների՝ 1) 242-րդ հոդվածում «157-րդ» թվից հետո լրացնել «առաջին մասի» բառերը. 2) 244.11-րդ հոդվածի 1-ին մասում «157-157.14-րդ» բառերը փոխարինել «152.2-րդ հոդվածի 2-րդ մասով, 157.1-157.14-րդ» բառերով. 3) 244.11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «157-157.14-րդ» բառերը փոխարինել «157.1-157.14-րդ» բառերով, «չափով,» բառից հետո լրացնել «152.2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով,». 4) 244.11-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «157-157.14-րդ» բառերը փոխարինել «157.1-157.14-րդ» բառերով:»	1.Ընդունվել է:	1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ «Հոդված 9. Օրենսգրքի 242-րդ և 244.11-րդ հոդվածների՝ 1) 242-րդ հոդվածում «157-րդ» թվից հետո լրացվել է «առաջին մասի» բառերը. 2) 244.11-րդ հոդվածի 1-ին մասում «157-157.14-րդ» բառերը փոխարինել «152.2-րդ հոդվածի 2-րդ մասով, 157.1-157.14-րդ»

			բառերով. 3) 244.11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «157-157.14-րդ» բառերը փոխարինել «157.1-157.14-րդ» բառերով, «չափով,» բառից հետո լրացնել «152.2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով,». 4) 244.11-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «157-157.14-րդ» բառերը փոխարինել «157.1-157.14-րդ» բառերով:»
	2. Նախագիծը լրացնել նոր 10-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ. **«Հոդված 10.** Օրենսգրքի 224-րդ հոդվածում՝ 3) 1-ին մասը «53,» թվից հետո լրացնել «95,» թվով, «160,» թվից հետո՝ «169.23, 172.2,» թվերով, իսկ «181,» թվից հետո՝ «182.3,» թվով. 2-րդ մասի 1-ին կետը «53,» թվից հետո լրացնել «95,» թվով, «160,» թվից հետո՝ «169.23, 172.2,» թվերով, իսկ «181,» թվից հետո՝ «182.3,» թվով:»:	2.Ընդունվել է.	2.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	3. Նախագիծը լրացնել նոր 12-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ. **«Հոդված 12.** Օրենսգրքի 254-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետը «180.1» թվից առաջ լրացնել «172.3,» թվով:»:	3. Ընդունվել է.	3. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: